ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/98

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ջիարջի» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական ռեգիստրի գրանցման համար՝ թիվ 273.110.1156506),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.03.2022թ. թիվ 26/26-1/4079-2022 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 03.03.2022թ. թիվ 95 գրության հիման վրա, 10.03.2022թ. թիվ 26/26-1/4079-2022 գրությամբ նախաձեռնել է «Ջիարջի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ջիարջի» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/98 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և հայտնել հետևյալը.

«Պատվիրատուի հետ պայմանագիրը կնքվել է 05.01.2022թ., որից հետո առաջին պատվերը ներկայացվել է 02.02.2022թ.: Պայմանագրով սահմանված է, որ առաջին պատվերից հետո Պատվիրատուն իրավունք ունի պարտադրել և պահանջել 20 օրացուցային օրվա ընթացքում պահանջել ապրանքը: Պայմանագրով ապանքի մատակարարման վերջնաժամկետ սահմանվել է 25.12.2022թ., մինչդեռ՝ Պատվիրատուն 23.02.2022թ. ծանուցմամբ հայտնել է, որ հիմք ընդունելով թիվ ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1 պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 2.1.7 կետի 2.1.7.1 բ) ենթակետը լուծում է թիվ ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1 պայմանագիրը»:

3. <u>«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.03.2022թ. թիվ 95 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեղեկացնում ենք Ձեզ, որ «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02835324) միջև 18.01.2022թ. կնքված թիվ ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է հիմք ընդունելով 18.01.2022թ. կնքված թիվ ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 2.1.7 կետի 2.1.7.1 բ) ենթակետը:

Խնդրում ենք Ձեզ «Ջիարջի» ՍՊԸ-ին ընդգրկել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) կետի հիման վրա»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/98 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/98 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/98 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 05.01.2022թ. կնքվել է թիվ «ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1» ծածկագրով «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 25.12.2022թ.:

3. Պատվիրատուի կողմից «Ջիարջի» ՍՊԸ-ին 02.02.2022թ. ներկայացվել է ապրանքների մատակարարման հայտ:

4. Պատվիրատուն «Ջիարջի» ՍՊԸ-ին ուղղված 23.02.2022թ. թիվ 82 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեղեկացնում ենք Ձեզ, որ «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 18.01.2022թ. կնքված թիվ «ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծում ենք հիմք ընդունելով 18.01.2022թ. կնքված թիվ «ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1» ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 2.1.7 կետի 2.1.7.1 բ) ենթակետը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 25.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.03.2022թ. թիվ 26/26-1/4079-2022 գրությունը, «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 03.03.2022թ. թիվ 95 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի համաձայն՝

1.Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2.***Պարտավորությունները ծագում են պայմանագրից***, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 05.01.2022թ. կնքվել է թիվ «ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1» ծածկագրով «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 25.12.2022թ.:

Պատվիրատուի կողմից «Ջիարջի» ՍՊԸ-ին 02.02.2022թ.ներկայացվել է ապրանքների մատակարարման հայտ:

Պատվիրատուն «Ջիարջի» ՍՊԸ-ին ուղղված 23.02.2022թ. թիվ 82 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեղեկացնում ենք Ձեզ, որ «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 18.01.2022թ. կնքված թիվ «ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծում ենք հիմք ընդունելով 18.01.2022թ. կնքված թիվ «ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1» ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 2.1.7 կետի 2.1.7.1 բ) ենթակետը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 25.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին***

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.***

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորությունները ծագում են պայմանագրից, հետևաբար՝ պայմանագրով էլ սահմանվում են պարտավորությունները կատարելու կարգն ու ժամկետները և դրանց մասով խախտումներն էական համարվելու պայմաններն ու դեպքերը, մինչդեռ՝ Պատվիրատուն 25.02.2022թ. լուծել է 05.01.2022թ. կնքված թիվ «ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/1-1» պայմանագիրը, Պայմանագրի կատարման վերջնաժամկետը այն է՝ 25.12.2022թ. և Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված ժամկետը, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի, լրացած չլինելու, այսինքն՝ Պայմանագրի 2.1.7 կետով նախատեսված էական խախտման փաստը վրա հասած չլինելու պայմաններում:

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.03.2022թ. թիվ 26/26-1/4079-2022 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**